ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՀԱՄՄԻԿ ՊԱՊԱՅԱՆԻՆ «Ս. ՍԱՀԱԿ - Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ԴՈՒՍՏՐՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՁԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՁՆԻՒ ՏԻԿԻՆ ՀԱՄՄԻԿ ՊԱՊԵԱՆ, ՈՐ Ի ՎԻԵՆՆԱ, ԱՒՍՏՐԻԱ

Համայն հայութեան հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք բերում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու եւ մեր ժողովրդի հարազատ զաւակիդ:

Սիրելի Տիկին Պապեան,

Երիտասարդ տարիքից մուտք գործելով երգարուեստի լայնահուն ասպարէզ եւ հանդէս գալով Երեւանի մայր բեմում՝ Ալ. Սպենդիարեանի անուան պետական օպերայում, Դուք կարճ ժամանակում կարողացաք հասկանալի դարձնել արդեն ճանաչուած մեծութիւնների կողքին՝ արժանանալով նրանց գնահատանքին ու վաստակելով ջերմ սէրը արուեստասէր մեր ժողովրդի: Հայ հանդիսատեսը քաղցրութեամբ է յիշում Ձեր անմոռանալի ելոյթները եւ միշտ սիրով սպասում ունկնդիր լինելու Ձեզ եւ վերստին հիանալու Ձեր տաղանդով, ասպուածապարգեւ ձայնի գեղեցկութեամբ ու կատարողական մեծ վարպետութեամբ:

Շնորհաշատ հայուհուդ բերած գնահատելի աւանդը երգարուեստի ասպարէզում քաջածանօթ է դարձրել Ձեր անունը նաեւ համայն աշխարհում: Այսօր Ձեր արուեստը արժանապէս գնահատուած է հայրենական ու միջազգային ամենաբարձր մակարդակներով: Պերճախօս է հանրայայտ այն բեմերի թուարկումը, որտեղ արդեն տասնեակ տարիներ մեծ յաջողութեամբ հանդէս էք գալիս Դուք՝ աշխատելով նշանաւոր խմբավարների ու աշխարհում լայնօրէն ճանաչուած բազմաթիւ երգիչների հետ: Գոհութիւն Աստուծոյ, որ մեր ժողովրդին պարգեւել է Ձեզ պէս տաղանդաւոր զաւակ, ով իր գործունէութեամբ յաւելում է փառքը հայ երաժշտարուեստի:

Մեծազնիւ տիկին Պապեան, երգարուեստի անդաստանում Ձեր աւանդի բարձր գնահատանքով Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ - ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ

պատուոյ բարձր շքանշանը:

Ի խորոց սրտի Հայրապետիս աղօթքն ու մաղթանքն է, որ մեր մեծ Ուսուցչապետերի՝ Սուրբ Սահակի եւ Սուրբ Մեսրոպի բարեխօսութեամբ Բարձրեալն Աստուած Իր ամենազօր եւ ամենախնամ Աջի հովանու ներքոյ պահի եւ պահպանի Ձեզ՝ պարգեւելով քաջառողջ արեւշատութիւն, ստեղծագործական նոր յաջողութիւններ եւ ամենայն բարիք:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 12-ն Յուլիսի
յամի Տեառն 2005 եւ ի թուին հայոց ՌՆԾԴ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 306